

# Էլեոնորա



Exported from Wikisource on 08/25/20

# Էլեոնորա

Էդգար Ալան  
Պո

[62]

## ԷԼԵՈՆՆՈՐԱ

Sub conservatione formae specificae  
salva  
anima<sup>[1]</sup>.

RAYMOND LULLY

Իմ տոհմը հնուց ճանաչված էր իր կրթությունից ու վառ երևակայության շնորհիվ: Շատերն ինձ խելագար էին կոչում, բայց դեռ հարց է, թե արդյո՞ք խելագարությունը բանականության գերազույն դրսևորումը չէ: Թերևս այն, ինչ պանծալի է, և այն ամենը, ինչ վեհ է, ծագում են հենց հիվանդագին ուղեղի այն հատուկ վիճակներից, որոնց շնորհիվ իմացությունը վեր է հառնում ի հաշիվ հասարակ գիտակցության: Ցերեկով երագողներին բացահայտ են շատ բաներ, որոնք մատչելի չեն նրանց, ով երագում է միայն գիշերը: Մշուշոտ անուրջներում նրանք նշմարում են հավերժի վաղանցիկ պատկերներն ու սարսալով արթնանում, հիշելով, որ հաղորդակից են եղել մի մեծ գեղեցիկի: Կցկտուր դրվագներով նրանք յուրացնում են բարու իմաստությունը, բայց ավելի շատ՝ չարիքի ստորին գիտությունը: Ինչևէ, անդեկ ու անառագաստ, նրանք խրվում

են «անճառելի լույսի» անհուն օվկիանոսը, որպեսզի, ինչպես նուբիացի բնախույզը, նորից *agressi sunt mare tenebrarum, quid in eo esset exploraturi*<sup>[2]</sup>:

Համարենք ուրեմն, որ ես խելագար եմ: Համենայն դեպս, ես ընդունում եմ, որ իմ հոգին գտնվել է երկու որոշակի վիճակներում՝ պայծառ ու անվիճելի դատողականության, որը վերաբերում է կյանքիս առաջին շրջանին, և կասկածանքի ու ստվերի, որը հարում է ներկայիս, և իմ կյանքի երկրորդ մեծ փուլի հուշն է կազմում: Այնպես որ, այն, ինչ կպատմեն իմ վաղ օրերից, թող ձեզ մոտ կասկած չհարուցի. ավելի ուշ շրջանի պատմությանը հավատացեք այնքան, որքան հարկ գտնեք, կամ բնավ մի հավատացեք, իսկ եթե անկարող եք չհավատալ, ուրեմն լուծեք այդ հանելուկն ինչպես Էդիպ արքան:

Նա, ում ես սիրել էի ջահել օրերիս և ում մասին հիմա հանգիստ ու պարզ գրում եմ այս հուշերը, իմ հանգուցյալ մոր միակ քրոջ միակ դուստրն էր: Էլեոնորա էր զարմուհուս անունը: Արևադարձային արևի ներքո մենք, միշտ միասին, ապրում էինք Երփներանգ Ծաղիկների Հովտում: Պատահական ճամփորդը երբեք չէր հասնում մեր հովտին, որովհետև այն ընկած էր հեռու-հեռու լեռների գրկում, և նրա ամենից մտերմիկ անկյուններին չէին հասնում նույնիսկ արևի շողերը: Ոչ մի կածան չէր անցնում այդ հովտով, և մեր երջանիկ կացարանին հասնելու համար պետք էր շատ ու շատ թավ անտառներ անցնել, տրորելով բյուրավոր ծաղիկների անուշ բույրը:

Այդպես, մենակ ու աշխարհից կտրված, ապրում էինք այդ հովտում ես, զարմուհիս և իր մայրը:

Լեռներից այն կողմն ընկած մռայլ երկրից դեպի մեզ էր հոսում մի խորը և նեղ գետ, որն իր հստակությամբ գերազանցում էր ամեն բան, բացի Էլեոնորայի աչքերից: Գետն անձայն գալարվում էր հովտի միջով և կորչում ստվերոտ մի կիրճում, որը շատ ավելի մռայլ էր, քան ակունքինը: Մենք այն «Լռության գետ» էինք կոչում, որովհետև նրա հոսքն ինչ-որ ննջեցնող ուժ ուներ: Գետը բոլորովին չէր կարկաչում և այնքան սահուն էր, որ նրա մարգարտե խճաքարերը, որոնցով մենք հաճախ գնայլվում էինք, միշտ անշարժ պատկած էին մնում իրենց տեղում, սքանչելի փայլ արձակելով:

Գետի և իր բյուրավոր ջինջ վտակների ափերն ու այն լանջը, որն ափերից իջնում էր դեպի հունը, ինչպես նաև ամբողջ հովիտը մինչև սարալանջերը ծածկված էին կարճ, խիտ և զարմանալիորեն հարթ կանաչ խոտի գորգով, որը համեմուկի բույր ուներ և նախշված էր մանուշակներով, դեղին հրանունկներով, սպիտակ մարգարտածաղիկներով ու արնագույն ասֆոդելներով, որոնց անմահական գեղեցկությունը երկնային փառք ու սեր էր ավետում մեր սրտերին:

Տեղ-տեղ այդ սքանչելի գորգի միջից բարձրանում էին սլացիկ ծառերի հեքիաթային պուրակները: Անուրջների ծնունդ հիշեցնող այդ ծառերն աճում էին ոչ թե մոմի պես ձիգ, այլ նագանքով ճկվելով մղվում էին դեպի լույսը, որը

կեսօրին թափանցում էր հովիտը: Նրանց կեղևն արծաթին տվող սևաթույր փայլ ուներ և իր նրբությամբ կգերազանցեր ամեն բան, բացի Էլեոնորայի այտերից: Եթե շիներ գնրուխտե սաղարթը, այդ ծառերը կարելի էր նմանեցնել իրենց տիրակալ Արևին երկրպագող սիրիական հսկա վիշապների:

Տասնհինգ տարի ձեռք-ձեռքի տված թափառում էինք մենք այդ հովտում, մինչև որ սերն այցելեց մեր սրտերը: Դա պատահեց մի երեկո, երբ դեռ նոր էր լրանում Էլեոնորայի տասնհինգ, իսկ իմ քսան տարին, և մենք, օձաձև ծառերի տակ գրկախառնված, Լոռիյան Գետի ջրերում դիտում էինք մեր արտացոլումը: Այդ քաղցր օրվա մնացորդը մենք անցկացրինք լոռիյան մեջ և նույնիսկ առավոտյան մեր խոսքերը քիչ էին և երկչոտ: Գետի ալիքները մեզ էին ավանդել Էրոս աստծուն, և Նա հրկիզել էր մեր մեջ մեր նախնիների կրակոտ ոգին: Դարերով մեր տոհմերն առանձնացնող կրքերը, ձուլվելով նրանց նույնքան հատուկ անուրջներին, երանության ու վայելքների մոլուցքով պարուրեցին Երփներանգ Ծաղիկների շովիտը: Ամեն ինչ հանկարծ փոխվեց: Ծառերը, որոնք մինչ այդ երբեք չէին ծաղկել, պոռթկացին տարօրինակ աստղաձև ծաղիկների բույլերով: Չնրուխտե գորգի երանգն ավելի խորացավ, իսկ այնտեղ, որտեղ մեկ առ մեկ թռչում էին մարգարտածաղիկները, տասնյակներով բացվեցին սուտակագույն ասֆոդելները: Ամենուր մեր առջև ժայթքում էր կյանքը, և երկայնասրունք հրահավր, որին մենք

երբեք չէինք տեսել, ուրիշ ուրախ և շքեղ թոշունների հետ բացել էր մեզ համար իր ալ թները: Գետը լցվել էր արծաթե ու ոսկե ձկներով, իսկ նրա հունում ծնվել էր մի մրմունջ, որը աստիճանաբար բարձրանալով, վերածվեց չքնաղ մի մեղեդու, ավելի գեղեցիկ, քան Էոլյան քնարի երգը, որը աշխարհումս ամեն ինչից քաղցր է, բացի Էլեոնորայի ձայնից: Նույնիսկ այն հսկա ամպը, որը մենք վաղուց նշմարել էինք Հեսպերի մոտ, դուրս լողաց, և, օրեցօր իջնելով, թիկնեց լեռների ուսին, ոսկեգօծելով նրանց մինչ այդ մոայլ զանգվածը և ասես հավելրժ ներփակելով մեզ պերճության ու փառքի կախարդական գնդանում:

Էլեոնորան սերովբեի պես գեղեցիկ էր և պարզ էր ու անմեղ, ինչպես այն կարճ կյանքը, որը նա ապրեց ծաղիկների մեջ: Նա չէր թաքցնում իր սիրտը կիզող կիրքը, և մենք, Երփներանգ Ծաղիկների Հովտում գբոսնելով, միասին խորացանք սիրո գաղտնիքների մեջ, գրուցելով վերջերս մեր շուրջը կատարված փոփոխությունների մասին:

Վերջապես մի օր, աչքերը թաց, խոսելով այն վերջին վշտալի փոփոխության մասին, որին ենթակա են բոլոր մարդիկ, նա այնուհետև չբաժանվեց այդ տխուր մտքից, նորից ու նորից անդրադառնալով նրան մեր գրույցներում, ինչպես որ Շիրագի երգիչն է իր գագելներում անընդհատ կրկնում նույն ազդեցիկ պատկերները:

Նա գգում էր, որ մահն արդեն կնքել էր իր ճակատը, որ, թիթեռնիկի պես, նա

անսահման գեղեցիկ էր ստեղծված լոկ մեռնելու համար, բայց, ինչպես մի օր գետի մոտ նա աղչամուղչին ինձ խոստովանեց, գերեզմանի խավարը միայն մի բանով է սարսափեցնում իրեն: Նրան վշտացնում էր այն միտքը, որ ես, թաղելով նրան Երփներանգ Ծաղիկների Հովտում, հավերժ կլքեմ մեր չքնաղ երկիրը, օտար ու առօրեական մի կնոջ նվիրելով իմ կրքոտ սերը, որն այժմ անբաժանորեն իրեն էր պատկանում: Այդ լսելով՝ ես առանց հապաղելու ծնկի նետվեցի և, աստժուն ու Էլեոնորային դիմելով, երդվեցի, որ միշտ հավատարիմ կմնամ իր հիշատակին, երբեք իմ կյանքը չեմ կապի երկրածին կնոջ հետ և չեմ դավաճանի այն սուրբ սերը, որը նա ինձ ընծայել էր: Ես վկայակոչեցի Տիեզերքի Մեծ Տիրակալին և Էլեոնորային, ում տեղն Էլիզիումի սրբերի մեջ է, երբևէ ինձ զարհուրելի մի պատժի (որն այստեղ չեմ էլ համարձակվում հիշատակել), եթե ես երբևէ ուրանամ իմ սիրո սուրբ ուխտը: Այս խոսքերից Էլեոնորայի ջինջ աչքերն ավելի պայծառացան, նա հոգոց հանեց, ասես կրծքից մի ծանր բեռ թոթափելով, հետո դողաց ու լաց եղավ, բայց ընդունեց իմ երդումը (քանի որ սոսկ երեխա էր), և հանգիստ սրտով պատրաստվեց մահվան: Մի քանի օր անց, հանդարտ ու անվրդով մեռնելիս, Էլեոնորան ասաց, որ հանուն այն ամենի, ինչ ես արեցի իր հոգու հանգստության համար, այդ հոգին մահից հետո հսկելու է ինձ, և, եթե դա հնարավոր լինի, կայցելի ինձ գիշերվա երազներում, իսկ եթե դրախտի հոգիներն անկարող են այդ անել, ապա հաճախ կավետի իր մասին իրիկնային

գեփյուռի մեղմ շնչով, կամ կլցնի իմ շնչած օդը երկնային բուրվառների անմահական բույրով: Այս խոսքերով Էլեոնորան բաժանվեց իր արդար կյանքից, սահման դնելով իմ գոյության առաջին փուլին:

Առայժմ իմ շարադրածը բոլորովին ստույգ է ու ճշմարիտ: Սակայն, հատելով ժամանակի այն պատնեշը, որը նշանավորում է սիրելիիս մահը և իմ գոյության երկրորդ փուլը, ես զգում եմ, որ ուղեղս մթազնում է, և սկսում եմ կասկածի ենթարկել իմ պատմության շարունակությունը: Ինչևէ, պիտի շարունակեմ. տարիները քարշ էին գալիս իրար ետևից, բայց ես չէի լքում Երփներանգ Ծաղիկների Հովիտը, որտեղ, արդեն երկրորդ անգամ, ամեն ինչ փոխվել էր: Աստղածն ծաղիկներն անհետացել ու այլևս չէին երևում, գմբուխտե գորգը խամրել էր, իսկ ասֆոդելներին փոխարինել էին մուգ, համարյա սև մանուշակները, որոնք ցողից ծանրացած միշտ անհանգիստ թրթռում էին: Կյանքը լքել էր երբեմնի գվարթ կածանները, և չքնաղ հրահավը, իր հետ եկած ուրախ ու պայծառ թռչունների նման, թևերը ծալել ու թողել էր հովիտը: Ոսկեգօծ ձկները ներքևի մռայլ կիրճով հեռացել էին հովտից ու այլևս չէին վերադառնում: Գետի քնքուշ օրորը, որը գերազանցում էր Էոլյան քնարի ձայնը և աշխարհում ամեն ինչից քաղցր էր, բացի Էլեոնորայի ձայնից, աստիճանաբար մարել և իր տեղը զիջել էր երբեմնի անդորրին: Նույնիսկ ահռելի ամպը տեղից պոկվել ու խավարի էր մատնել լեռները, կորչելով Հեսպերի մոտ և իր հետ տանելով Երփներանգ



Ծաղիկների շովտի բազմագույն պերճանքն ու փայլը:

Բայց Էլեոնորայի խոստումը չէր մեծացվել՝ ես լսում էի երկնային բուրվառների սոսափյունը, զգում էի հովիտը պարուրած խունկի բույրը և, մեկ-մեկ, երբ ծանր բաբախում էր մենակությունից նեղված սիրտս, զեփյուն ինձ էր հասցնում հեռավոր, քնքուշ մի հոգոց: Հաճախ գիշերային օդը լցվում էր անորոշ մրմունջներով, իսկ մի անգամ, ավա՛ղ, մի անգամ միայն, իմ մահանման քունն ընդհատվեց եթերային ու անհրական մի համբույրով:

Բայց իմ թափուր սիրտն այդ ամենով չէր հագնում: Ես սեր էի տենչում, սեր, որը ժամանակին հորդում էր իմ կրծքից: Շովիտը սկսել էր ճնշել ինձ Էլեոնորայի հետ կապված հուշերով, և ես ընդմիշտ լքեցի այն հանուն աշխարհի սին կյանքի ու բուռն վայելքների:

\* \* \*

Ես հայտնվեցի անծանոթ մի քաղաքում, որտեղ ամեն ինչ ասես ստեղծված էր Երփներանգ Ծաղիկների շովտի իմ քաղցր անուրջները ջնջելու համար: Շքեղ արքունիքի պերճանքը, զենքի զրնգոցը, զեղեցկադեմ կանայք զերեցին ու արբեցրին ինձ: Բայց ես դեռևս հավատարիմ էի իմ երդմանը, և գիշերվա լուռ ժամերին ինձ դեռ հասնում էին Էլեոնորայի ներկայությունը վկայող նշանները: Հանկարծ ամեն ինչ վերջացավ՝ աչքերս մթնեցին, և ես մնացի մենակ, ինձ պաշարած նողկալի մտքերի ու սոսկալի գայթակղությունների հետ դեմ առ դեմ:

Հեռու-հեռվից, բոլորովին անծանոթ մի երկրից մեր ուրախ արքունիքը, որին ես ծառայում էի, ժամանել էր մի չքնաղ օրհորդ, որի անգուգական գեղեցկությունն իսկույն գերեց իմ դավաճան սիրտը: Ինքնամոռաց սիրով տարված, ես, առանց տատանման, ծունկի իջա նրա առջև: Կարո՞ղ էր արդյոք հովտի աղջնակի նկատմամբ տածած իմ զգացումը համեմատել այն տենդոտ կրքի, այն ցնծագին հափշտակվածության հետ, որով իմ ամբողջ հոգին բռնկվել էր աստվածային Էրմենգարդի հանդեպ: Աննման էր հրեշտակ Էրմենգարդը, և այդ միտքն էլ տեղ չէր թողնում ուրիշների համար: Կատարյալ էր երկնային Էրմենգարդը, և, սուզվելով նրա հուշարար աչքերի անդունդը, ես մտածում էի միայն նրանց և միայն նրա մասին:

Ես պսակվեցի, ես չվախեցա իմ անեծքից, և նրա դառնությունն ինձ չդիպավ: Մեկ, միայն մեկ անգամ, գլխիս վրա, պատուհանի միջից, մի թույլ հառաչ լսվեց, և վաղուց մոռացված, բայց ինձ այնքան ծանոթ քաղցր ձայնը շնչաց.

— Թող քունդ հանգի՛ստ լինի, քանզի Սիրո Ոգին իշխում է ամենուր և ամենից վեր, և, քո սիրտն Էրմենգարդին նվիրելով, դու ազատվում ես, թե ինչու, կիմանաս երկնքում, այն երդումից, որ տվել էիր Էլեոնորային:

1. ↑ Հատուկ միջոցով պահպանելու դեպքում հոգին հարատևում է (լատ.):
2. ↑ Մտնել խավարի ծովը, նրա պարունակությանը հետազոտելու համար (լատ.):

# About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)<sup>[1]</sup>. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)<sup>[2]</sup> license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)<sup>[3]</sup>.

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)<sup>[4]</sup>.

The following users contributed to this book:

- GeoO

- 
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
  2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
  3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
  4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)